



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

**ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈՒ ԲԱԼԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ
ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Սիրելի՛ շրջանավարտներ,

Շնորհավորում եմ Վերջին զանգի կապակցությամբ, որը հնչում է որպես հասուն կյանքի սկիզբն ազդարարող դողանջ: Հասկանալի ու բնական է այն հուզմունքը, որ այս պահին ապրում եք դուք՝ հրաժեշտ փալով հարազատ դարձած կրթօջախին ու սիրելի ուսուցիչներին:

Շնորհավորանքներս եմ հղում Բյուրեղավանի, Նուռնուսի և Ջրաբերի դպրոցների շրջանավարտներին, մանկավարժներին ու ծնողներին:

Դպրոցը ձեզ համար եղել է կրթության, դաստիարակության, արժեհամակարգի ձևավորման դարբնոց: Հավատացած եմ՝ որպես երիտասարդ և նախաձեռնող, հաջողելու եք կյանքում: Լինելու եք արժանապատիվ քաղաքացիներ պետության ու համայնքի համար:

Մեկ անգամ ևս շնորհավորելով ձեզ դպրոցն ավարտելու կապակցությամբ, մաղթում եմ բարի՛ երթ, երջանկություն և նորանոր բարձունքների նվաճում:

